

**Ֆիզիկական և իրավաբանական անձանց 2014 թվականի դիմումների ու
հարցումների վերաբերյալ տեղեկատվություն**

2014 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն մուտքագրվել է քաղաքացիների կողմից ստացված **228** դիմում, որոնց ընթացք է տրվել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Դիմումների կառուցվածքն ըստ ուղղությունների՝

Ուղևորության դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ – 131 դիմում

Սպորտի վարպետի վկայականը վերականգնելու վերաբերյալ - 5 դիմում

Պաշտոնում նշանակվելու և աշխատանքի ընդունվելու վերաբերյալ – 31 դիմում

Ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ - 13 դիմում

Անձնական բնույթի տարբեր խնդրանքների և տեղեկանք տրամադրելու վերաբերյալ - 48 դիմում

2014 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում զանգվածային լրատվության միջոցներից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից առձեռն, էլեկտրոնային փոստով կամ նախարարության պաշտոնական կայքի միջոցով ստացվել է տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ **15** գրավոր հարցում, որոնց ընթացք է տրվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվություն ստանալու բոլոր բանավոր հարցումներին պատասխան է տրվել անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: